Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1537-Լ որոշման

Կ Ա Ր Գ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԵՆԻ ԵՎ ՈՍԿԵՀԱՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԽԱՂՈՂԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻՑ ՄԹԵՐՎՈՂ ԽԱՂՈՂԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. 2025 թվականի Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառման շրջանակներում Վայոց ձորի մարզից մթերվող խաղողի քանակների փաստաթղթավորման և տեղեկատվության տրամադրման կարգի (այսուհետ՝ կարգ) գործողությունը տարածվում է միջոցառման շրջանակներում առնվազն 700 տոննա և ավելի քանակությունը նվազագույնը 220 դրամով Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի մթերումներ իրականացնող իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ) վրա:

2. Կարգով հաստատվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից Վայոց ձորի մարզից գնված Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի քանակների փաստաթղթավորման և նախարարությանն ու մարզպետների աշխատակազմերին (այսուհետ՝ լիազոր մարմիններ) ներկայացվող տեղեկատվության ձևը, ներկայացման ժամկետները և լրացման կարգը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Լիազոր մարմիններին տեղեկատվության տրամադրման նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից Վայոց ձորի մարզից մթերվող խաղողի քանակների փաստաթղթավորումն իրականացվում է կարգի ձևին համապատասխան:

4. Տնտեսավարող սուբյեկտներն Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի գնման ժամանակաշրջանում ամենօրյա պարբերականությամբ լիազոր մարմինների էլեկտրոնային փոստերի հասցեներին են ներկայացնում իրենց կողմից Վայոց ձորի մարզից գնված Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի քանակների վերաբերյալ Էքսել (Excel) ծրագրով լրացված և տնտեսավարող սուբյեկտի կողմից լիազորված անձի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով տեղեկատվությունը՝ կարգի ձևին համապատասխան:

5. Կարգի ձևի տեղեկատվությունը ներկայացվում է խաղողի գնում կատարած յուրաքանչյուր օրվա համար՝ մինչև հաջորդող օրվա ժամը 18^{00}-ն:

6. Լիազոր մարմիններն ապահովում են կարգի ձևի տեղեկատվությունում ներառված՝ առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության գաղտնիությունը:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Կարգի ձևի տեղեկատվությունում ներառվող շահառուի, խաղողի տնկարկի տեղակայման վայրի և գնված խաղողի վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն շահառուի և տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերում ներառված տվյալներին:

8. Կարգի ձևի տեղեկատվությունը լրացվում և ներկայացվում է հայերենով՝ Սիլֆաեն (Sylfaen) տառատեսակով:

9. Թվային ցուցանիշները լրացվում են թվի տասներորդական մասի ճշտությամբ:

10. Խաղողի տնկարկի տեղակայման վայրի, շահառուի և խաղողի վերաբերյալ տվյալները լրացվում են ճշգրիտ և ամբողջական, որ ապահովվի դրանց նույնականացումը:

Ձև

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

_____

(Տնտեսավարող սուբյեկտի անվանումը և մթերման կետը)

կողմից Վայոց ձորի մարզից մթերված (գնված) Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի քանակների մասին

Ամսաթիվը (օր, ամիս,տարի, XX.XX.2025)	Շահառուի անվանումը կամ անունը, ազգանունը	Շահառուի ՀՎՀՀ-ն կամ անձնագրի սերիան կամ ն/ք համարը	Շահառուի հեռախոսահամարը XXXXXXXX)	Խաղողի գնման պայմանագրի համարը	Խաղողի տնկարկի տեղակայման համայնքը	Խաղողի տնկարկի տեղակայման բնակավայրը	Խաղողի տնկարկի չափը՝ ըստ պայմանագրի (հա)	Հանձնած խաղողի քանակը (կգ)	Մթերման (գնման) 1 կգ-ի գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10

Ստորագրող

..... …….....

(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....

(ստորագրությունը)

.... 2025 թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ